«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«07» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. N 671-Լ

ՀՐԱՄԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 577-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «ե» և 29-րդ կետի «գ» ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2019 թվականի մարտի 05-ի թիվ 42-Լ հրամանում փոփոխություն կատարելու և 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 468-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 577-Լ հրամանի 1-ին կետի բ) ենթակետով հաստատված հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնի պետ Էդուարդ Խաչատրյանին՝ իրազեկել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատողներին սույն հրամանի վերաբերյալ:

3. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 03-ից:

ՏՆՕՐԵՆ՝ Դ. ՂՈՒԼՅԱՆ

Հավելված 1
«Հայաստանի Հանրապետության
տարածքային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
2023թ. դեկտեմբերի 07-ի թիվ 671-Ա հրաման

ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

I. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետև՝ Կենտրոն) փորձաքննությունների կատարման և փաստաթղթավորման հետ կապված հարաբերությունները:

2. Կենտրոնում փորձաքննությունների կատարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև սույն կարգի պահանջներին համապատասխան:

3. Կենտրոնում փորձաքննությունների կատարման համար հիմք են հանդիսանում փորձաքննություն նշանակելու մասին ՀՀ դատարանների որոշումները, վարչական, քրեական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումները, իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա Կենտրոնի հետ կնքված պայմանագրերը (այսուհետև նաև՝ Նախաձեռնողի որոշում):

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. **Փորձագետ՝** գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի, կամ այլ բնագավառի հատուկ գիտելիքների ունեցող և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորում ստացած անձ,

5. **Կատարող փորձագետ՝** այն անձը ում սույն կարգով սահմանված ձևով հանձնարարվել է փորձաքննության կատարումը,

6. **Փորձագետի եզրակացություն՝** գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, իրեն առաջադրված, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ պարզաբանման նպատակով հետազոտության հիման վրա կազմվող սույն կարգի թիվ 1 ձևով սահմանված գրավոր փաստաթուղթ,

7. **Փորձագետի կարծիք՝** գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, քրեական վարույթի մասնավոր մասնակցի կողմից փորձագետին առաջադրված, ինչպես նաև իր

իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ կազմվող գրավոր փաստաթուղթ, որը կազմվում է առանց հետազոտություն իրականացնելու,

8. Միանձնյա փորձաքննություն՝ որևէ բնագավառում հատուկ գիտելիքների և հմտությունների օգտագործմամբ իրականացվող փորձաքննություն, որը կատարվում է մեկ փորձագետի կողմից,

9. Հանձնաժողովային փորձաքննություն՝ նույն բնագավառում հատուկ գիտելիքների և հմտությունների օգտագործմամբ իրականացվող փորձաքննություն, որը կատարվում է մի քանի փորձագետի կողմից,

10. Համալիր փորձաքննություն՝ տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառմամբ իրականացվող փորձաքննություն:

11. Զուգահեռ փորձաքննություն՝ միևնույն գործի առնչությամբ, զուգահեռաբար, միմյանցից անկախ, մեկը մյուսից տարբերվող հետազոտման օբյեկտներով կամ լուծվող հարցերի շրջանակով, այդ թվում՝ նաև դրանց լուծման ընթացքում կիրառման ենթակա հատուկ մասնագիտական գիտելիքների ոլորտներով իրականացվող փորձաքննություն,

12. Հաջորդական փորձաքննություն՝ կատարվում է հաշվի առնելով մյուս փորձաքննության արդյունքները՝ ըստ անհրաժեշտ հաջորդականության, անկախ յուրաքանչյուրի կատարման ընթացքում կիրառման ենթակա հատուկ մասնագիտական գիտելիքների ոլորտների միատեսակությունից,

13. Լրացուցիչ փորձաքննություն՝ նշանակվում է երբ փորձագետի եզրակացությունը թերի է, անորոշ կամ ոչ ամբողջական՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ այլ փորձագետի,

14. Կրկնակի փորձաքննություն՝ նշանակվում է երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ, հանձնաժողովային փորձաքննություն կատարած փորձագետները չեն հանգել միասնական հետևության, անթույլատրելի են ճանաչվել փորձաքննության ընթացքում օգտագործված ապացույցները, կամ խախտվել է փորձաքննության կատարման կարգը դրա կատարումը հանձնարարելով մեկ այլ փորձագետի:

III. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

15. Փորձագետն իրավունք ունի՝

1) փորձագետի եզրակացություն կամ կարծիք տալու համար ծանոթանալ վարույթի կամ տրամադրված այլ վերաբերելի նյութերին և դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ,

2) նախաձեռնողից պահանջել եզրակացություն տալու համար անհրաժեշտ լրացուցիչ նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտների ու հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ տվյալներ և տեղեկություններ,

3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել ապացուցողական կամ վարույթային գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար,

4) վարչական դատավարության շրջանակում փորձագետի եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված այլ նաև չառաջադրված սակայն իր իրավասության շրջանակի մեջ մտնող, և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած և տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ,

5) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված և սույն կարգով չսահմանված այլ իրավունքներ:

16. **Փորձագետը պարտավոր է՝**

1) պարզել առաջադրված հարցերի՝ իր հատուկ գիտելիքների տիրույթից կամ իրավասություններից դուրս լինելու հանգամանքը,

2) իրեն առաջադրված հարցերի շրջանակում տալ հիմնավոր և անաչառ եզրակացություն կամ կարծիք,

3) ապահովել իրեն հանձնված հետազոտման նյութերի, օբյեկտների անվնաս պահպանումը, առավելագույնս պահպանել դրանց ելակետային վիճակը, իսկ եթե հետազոտության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ելակետային վիճակի փոփոխման, ապա դա կատարել բացառապես Նախաձեռնողի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո,

4) քրեական վարույթի շրջանակում փորձագետի եզրակացություն կամ կարծիք տալ ոչ միայն առաջադրված հարցերի շրջանակում, այլ նաև չառաջադրված սակայն իր իրավասության շրջանակի մեջ մտնող, և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած և տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ,

5) ձեռնպահ մնալ կատարման ընդունել որևէ փորձաքննություն՝ առանց Կենտրոնի տնօրենի (բացակայության դեպքում տեղակալի) և անմիջական ղեկավարի հանձնարարականի առկայության,

6) բացառել այնպիսի իրեղեն ապացույցների, նյութերի, տվյալների, հետազոտումը, որոնք Նախաձեռնողի կողմից կամ վերջինիս իմացությամբ և թույլտվությամբ տրամադրված չեն փորձաքննությանը, բացառությամբ՝ հետազոտության կատարման մեթոդից բխող հանրամատչելի տեղեկատվության՝ (վիճակագրական, համեմատական տվյալներ, պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն, ՀՀ կառավարության կոմիտեի քարտեզներ, հավաստիությունը հաստատված հանրամատչելի այլ աղբյուրներ),

7) ձեռնպահ մնալ փորձաքննությանը վերաբերող նյութերը, առարկաները առանց տնօրենի համաձայնության վարչական շենքի տարածքից դուրս բերելուց,

8) ձեռնպահ մնալ պատասխանել առաջադրված հարցերին, եթե դրանք դուրս են իր հատուկ գիտելիքների, հմտությունների կամ իրավասությունների շրջանակից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար,

9) հրաժարվել փորձաքննության կատարումից և հայտնել ինքնաբացարկ, եթե

ա. մինչդատական վարույթում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերի շրջանակներում ունկնդրել է ներկայացված միջնորդությունքի կապակցությամբ միջնորդյալի խոստովանությունը,

բ. տվյալ փորձաքննությունը Նախաձեռնողի կամ վարույթի մասնակիցներից (կողմերից) որևէ մեկի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կամ այլ կախվածության հարաբերությունների մեջ,

գ. որպես մասնավոր անձ՝ ականատես է եղել այն փաստերին, որոնք քննարկվում են տվյալ փորձաքննության շրջանակում,

դ. առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ վարույթի հետ կապված նրա անկողմնակալության մեջ,

10) փորձաքննության իրականացման ընթացքում Փորձագետը պարտավոր է ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականությունների կատարումը, որոնք սահմանված չեն սույն կարգով:

IV. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

17. Փորձագետը փորձաքննության կատարմանը ձեռնամուխ է լինում Կենտրոնի տնօրենի (բացակայության դեպքում տեղակալի) և անմիջական ղեկավարի գրավոր հանձնարարության հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում քննիչի կողմից որոշմամբ նշված փորձագետին հանձնարարելու դեպքում, այդ որոշման հիման վրա:

18. Փորձաքննություն կատարելու հանձնարարությունը և կից նյութերը ստանալուց հետո փորձագետն անմիջապես իր անմիջական ղեկավարին, իսկ անհնարինության դեպքում Կենտրոնի տնօրենին, գրավոր հայտնում է առաջադրված հարցերը իր հատուկ գիտելիքների տիրույթից կամ իրավասություններից դուրս լինելու վերաբերյալ:

19. Փորձաքննություն կատարելու հանձնարարությունը և կից նյութերը ստանալուն հաջորդող օրվանից հետո **առավելագույնը 10 օրվա ընթացքում** կատարող փորձագետի առաջարկությամբ տվյալ փորձագիտական ստորաբաժանման ղեկավարի կողմից սահմանվում է փորձաքննության կատարման և ավարտման նախատեսվող ժամկետ: Ավարտման ժամկետի մասին տվյալ փորձագիտական ստորաբաժանման ղեկավարը գրառում է կատարում և ստորագրում ստորաբաժանման (բաժնի) գրանցամատյանում, միաժամանակ՝ այդ մասին նշում կատարելով, Կենտրոնի տնօրենին ամսական կտրվածքով ներկայացվող սույն Կարգի թիվ 10 ձևին համապատասխան կազմված ամսական հաշվետվության մեջ: Իսկ ստորաբաժանման ղեկավարի կողմից նախատեսված, սակայն այդ ժամկետում փորձաքննությունը չավարտված դեպքերի մասով, գրառում է կատարվում հերթական՝ ավարտի ժամկետ ներառող ամսվա համար Կենտրոնի տնօրենին ներկայացվող հաշվետվությունում նախատեսված ժամկետների չպահպանման պատճառների վերաբերյալ:

19.1. Փորձաքննություն կատարելու հանձնարարությունը և կից նյութերը ստանալուն հաջորդող օրվանից հետո **առավելագույնը 10 օրվա ընթացքում** կատարող փորձագետը ուսումնասիրում է որոշմամբ առաջադրված հարցերը և կից ներկայացված ելակետային տվյալները և անհրաժեշտության դեպքում կազմում է հիմնավորված և պատճառաբանված դիմում կամ միջնորդություն՝ պահանջելով այն ելակետային տվյալները, (անհրաժեշտ

օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր) որոնք անհրաժեշտ են առաջադրված հարցերին լիարժեք և փաստարկված պատասխանելու և Եզրակացություն կազմելու համար համաձայն՝ թիվ 3, 4 կամ 5, 6 ձևերի: Փորձագետի կողմից հավելյալ արտագնա հետազոտություն (դեպքի վայրի, օբյեկտի ուսումնասիրություն, տեղազննում և այլն) կատարելու անհրաժեշտության դեպքում, նույն ժամկետում նախաձեռնողին է ներկայացվում դիմում կամ միջնորդություն՝ դրանում նշելով հետազոտություն կատարելու անհրաժեշտության և դրա կատարման նախընտրելի ժամկետների վերաբերյալ: Սույն կետում սահմանված ժամկետի խախտմամբ դիմում կամ միջնորդություն ներկայացնելու պարագայում, Կենտրոնի տնօրենին ներկայացվում է ժամկետի խախտման պատճառների վերաբերյալ զեկուցագիր:

20. Նախորդ կետում նշված 10-օրյա ժամկետում ելակետային տվյալներ պահանջելու վերաբերյալ դիմում կամ միջնորդություն ուղարկելուց հետո, 30 օրվա ընթացքում Նախաձեռնողից գրավոր պատասխան չստանալու դեպքում, կատարող փորձագետի կողմից եռօրյա ժամկետում ուղարկվում է ծանուցում՝ համաձայն թիվ 7, թիվ 8 ձևերի, փորձաքննություն նշանակող անձին, (պաշտոնատար անձի դեպքում՝ վերջինիս անմիջական ղեկավարին, քրեական վարույթների դեպքում՝ պատճենը նաև վարույթը հսկող ստորաբաժանման ղեկավարին) նշելով, 30 օրյա ժամկետում անհրաժեշտ տվյալները չապահովելու դեպքում, փորձաքննությունը անկատար թողնելու վերաբերյալ: Եթե առկա ելակետային տվյալներով հնարավոր է մասնակիորեն անդրադառնալ փորձաքննությամբ առաջադրված որոշ հարցադրումների, ապա փորձաքննությունը կատարվում է ըստ ունեցած ելակետային տվյալների: Սույն կետում նշված ժամկետներում Նախաձեռնողից պատասխան չստանալու կամ ոչ ամբողջական տվյալներ տրամադրելու դեպքում, կատարող փորձագետը իր անմիջական ղեկավարին, վերջինս էլ Կենտրոնի տնօրենին գրավոր տեղեկացնում են այդ մասին: Բացառիկ դեպքերում Կենտրոնի տնօրենը կարող է կատարող փորձագետին հանձնարարել պահանջված ելակետային տվյալներին ապասելու և փորձաքննությունը եղած ելակետային տվյալներով չավարտելու վերաբերյալ, միաժամանակ սահմանելով առավելագույն ժամկետ:

21. Փորձաքննության կատարման ընթացքում ներկայացված դիմումի կամ միջնորդության բավարարման արդյունքում, Նախաձեռնողից կամ վարույթի մասնակցից լրացուցիչ ելակետային տվյալներ ստանալու պարագայում, փորձագիտական ստորաբաժանման ղեկավարը 10-օրյա ժամկետում կարող է վերանայել նախկինում սահմանած տվյալ փորձաքննության կատարման ժամկետը՝ այդ մասին բաժնի գրանցամատյանում կատարելով համապատասխան գրառում: Այդ պարագայում ավարտման ժամկետը չվերանայելը և բաժնի գրանցամատյանում նոր գրառում չկատարելը դիտվում է որպես հավաստում առ այն, որ փորձաքննությունը նախատեսվում է ավարտել արդեն իսկ սահմանված ժամկետում:

22. Հետազոտության ցանկացած փուլում, փորձագետը կարող է կազմել հիմնավորված և պատճառաբանված դիմում կամ միջնորդություն՝ պահանջելով այն ելակետային տվյալները, (անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր) որոնք անհրաժեշտ են առաջադրված հարցերին լիարժեք և փաստարկված պատասխանելու և Եզրակացություն

կազմելու համար: Սինքրոնությունում նշվում է նաև հետազոտության տվյալ փուլում անհրաժեշտության առաջացման հանգամանքների վերաբերյալ:

23. Կատարող փորձագետը փորձաքննությունը պետք է կատարի ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ավել քան յուրաքանչյուր տեսակի (մասնագիտական ուղղվածության) փորձաքննության մասով՝

1) քրեական դատավարության շրջանակում նշանակված փորձաքննության դեպքում՝ առավելագույնը 3 ամիս ժամկետում,

2) քաղաքացիական, վարչական դատավարության կամ վարչական վարույթների շրջանակում նշանակված կամ պայմանագրային հիմունքներով կատարվող փորձաքննության դեպքում՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում:

24. Փորձաքննության կատարման ժամկետի հաշվարկը սկսվում է փորձաքննություն նշանակելու մասին Նախաձեռնող մարմնի որոշումը (կնքված պայմանագիրը) և փորձաքննության կատարման համար անհրաժեշտ նյութերը, ելակետային տվյալները Կենտրոնում ստանալու օրվան հաջորդող օրը և ավարտվում է փորձագետի եզրակացությունն առաքման համար պատրաստ վիճակում Կենտրոնի գրասենյակին հանձնելու և դրա վերաբերյալ տվյալ փորձագիտական ստորաբաժանման գրանցամատյանում գրառում կատարելու օրը:

25. Փորձաքննության կատարման համար սույն կարգով սահմանված ժամկետը խախտելու դեպքում, կատարող փորձագետը՝ տվյալ փորձագիտական ստորաբաժանման ղեկավարին, իսկ ստորաբաժանման ղեկավարը Կենտրոնի տնօրենին ներկայացնում են ժամկետի խախտման պատճառների և նախատեսվող փաստացի ավարտման ժամկետի վերաբերյալ զեկուցագիր: Զեկուցագրում նշված հանգամանքները հիմնավոր համարվելու դեպքում, Կենտրոնի տնօրենը կարող է երկարաձգել փորձաքննության կատարման ժամկետը և սահմանել ավարտման նոր ժամկետ:

26. Եթե Նախաձեռնողի որոշմամբ փորձաքննության կատարումը հանձնարարվել է որևէ փորձագետի, որն արդեն Կենտրոնում չի աշխատում կամ մեկ այլ հիմքով օբյեկտիվորեն հնարավոր չէ անձամբ կատարել փորձաքննությունը, ապա այդ մասին պատասխանատու փորձագիտական ստորաբաժանման ղեկավարը տեղեկացնում է Կենտրոնի տնօրենին, իսկ վերջինս այդ մասին հայտնում է Նախաձեռնողին, միաժամանակ հարցում կատարելով Նախաձեռնողին՝ ստանալու համար վերջինիս համաձայնությունը, փորձաքննության կատարումը այլ փորձագետին հանձնարարելու վերաբերյալ:

27. Որպես կանոն փորձաքննությունների կատարումը սկսվում է ըստ ստացման հերթականության՝ անհրաժեշտ ելակետային տվյալների առկայության դեպքում, սակայն փորձաքննությունների ավարտը գործի ծավալներից, փորձագետի ծանրաբեռնվածությունից, ընթացքում ի հայտ եկած որոշակի նյութերի, տվյալների կամ տեղեկատվության անբավարարությունից տվյալ փորձագետի մոտ առկա այլ հրատապ անհետաձգելի փորձաքննությունների առկայությունից (օրինակ՝ ձերբակալման կամ կալանավորման գործընթացներում կամ անձանց կյանքի, պետական և ազգային անվտանգության շահերին առնչվող խիստ անհետաձգելի դեպքերում) և այլ օբյեկտիվ գործոններով պայմանավորված

կարող է ավարտվել ստացման հերթականությունից տարբերվող ժամկետներում (արտահերթ):

28. Հետազոտության ցանկացած փուլում, անհրաժեշտություն առաջանալու դեպքում, գրավոր դիմում կամ միջնորդություն է ներկայացվում Եզրակացություն տալու համար անհրաժեշտ հետազոտման օբյեկտների ոչնչացման կամ դրանց վիճակի էական փոփոխման միջոցով հետազոտություն կատարելու համար Նախաձեռնողի գրավոր համաձայնությունն ստանալու վերաբերյալ համաձայն՝ սույն Կարգի թիվ 9 ձևի:

29. Փորձաքննության կատարման համար Կենտրոնում ստացված նյութերն առանց փորձագիտական հետազոտման վերադարձվում են Նախաձեռնողին, իսկ փորձաքննությունը թողնվում է անկատար, եթե փորձաքննության կատարումն անհնարին է դարձել հետևյալ պատճառներով՝

1) հետազոտման ենթակա օբյեկտները պիտանի չեն հետազոտման համար (թաց, նեխած, բորբոսնած առարկաներ և այլն),

2) Նախաձեռնողն անհամաձայնություն է հայտնել հետազոտման օբյեկտի ոչնչացման կամ դրա ելակետային վիճակի էական փոփոխման միջոցով հետազոտություն կատարելուն,

3) Նախաձեռնողի որոշմամբ փորձաքննության կատարումը հանձնարարվել է որևէ փորձագետի, որն արդեն Կենտրոնում չի աշխատում կամ մեկ այլ հիմքով օբյեկտիվորեն հնարավոր չէ անձամբ կատարել փորձաքննությունը, այդ մասին հայտնվել է Նախաձեռնողին, և վերջինս անհամաձայնություն է հայտնել փորձաքննության կատարումն այլ փորձագետի հանձնարարելու վերաբերյալ,

4) Կենտրոնում տվյալ տեսակի փորձաքննություն կատարելու լիազորության (լիցենզիա և այլն) բացակայության կամ Կենտրոնում համապատասխան բնագավառի մասնագետի կամ անհրաժեշտ ռարքավորումների բացակայության դեպքերում,

5) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր չկնքելու կամ փորձաքննության կատարման համար սահմանված վճարումները չկատարելու դեպքերում:

30. Փորձաքննության շրջանակում արտագնա հետազոտության, տեղազննության կամ նմուշառման մեկնելիս, փորձագետը ըստ անհրաժեշտության կազմում է արձանագրություն՝ հետազոտվող օբյեկտի, առարկաների կամ տեղանքի նկարագրության վերաբերյալ: Փորձագետի արձանագրությունը ստորագրում են գործողությանը ներկա գտնված կամ մասնակցած անձինք, իսկ վերջիններիս կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում, փորձագետը այդ մասին նշում է կատարում արձանագրությունում:

31. Փորձագետի եզրակացության համար հետևություններ անելիս նախկինում այլ փորձագետի կողմից կազմված Արձանագրությունը կարող է որպես ելակետային տվյալ կիրառել այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջացել կրկին հետազոտել օբյեկտները, սակայն դրանց նախնական ելակետային վիճակը այլևս պահպանված չէ, որի արդյունքում օբյեկտիվորեն անհնարին է դարձել կրկին հետազոտել արդեն իսկ հետազոտված օբյեկտները: Այլ փորձագետի կողմից կազմված Արձանագրության տվյալները օգտագործելու

անհրաժեշտությունը հիմնավորում է փորձագետը, այդ մասին նշելով փորձագետի եզրակացության մեջ:

V. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

32. Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո, փորձագետը կազմում է իր ստորագրությամբ հաստատված գրավոր եզրակացությունը, իսկ փորձագետների ստորագրությունները վավերացվում են փորձաքննությունների համար նախատեսված Կենտրոնի կլոր կնիքով: Եզրակացությունը թիվ 2 ձևով սահմանված նմուշի ուղեկցական գրության հետ միասին ուղարկվում է Նախաձեռնողին: Փորձաքննության հետ կապված ծախսերը վճարված չլինելու դեպքում, թիվ 2 ձևով սահմանված ուղեկցական գրության մեջ կատարվում է նշում՝ դրանք դատական ծախսերում ներառելու անհրաժեշտության մասին:

33. Փորձագետի եզրակացության մեջ նշվում են՝

1) փորձաքննության կատարման ժամանակը և վայրը,

2) փորձագետի անունը և ազգանունը, նրա մասնագիտական ձեռնհասությունը և որակավորումը հավաստող տվյալները, դատափորձագետի աշխատանքային ստաժը,

3) փորձաքննության կատարման հիմքը,

4) փորձաքննության տեսակը,

5) փորձաքննության կատարման ընթացքում օգտագործված՝ վարույթի նյութերը, այդ թվում՝ իրեղեն ապացույցները, նմուշները և այլ օբյեկտներ,

6) փորձաքննության կատարմանը մասնակցած անձինք,

7) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,

8) կիրառված մեթոդների նկարագրությունը,

9) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները,

10) հետազոտություններից արված հետևությունները,

11) հետազոտության ընթացքում ի հայտ եկած այն հանգամանքները, որոնք, փորձագետի կարծիքով, կարող են նշանակություն ունենալ վարույթի համար,

12) տեղեկություններ հետազոտության ընթացքում օգտագործված, կիրառված գործիքների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ:

34. Փորձագետի եզրակացությունում կարող են նշվել՝

1) փորձագետի եզրակացությունը վարույթային, դատավարական գործողությունների շրջանակից դուրս այլ, այդ թվում՝ պետական գրանման, հաշվառման կամ այլ գործարքների համար հիմք չհանդիսանալու վերաբերյալ,

2) փորձաքննությունը տրամադրված նյութերի հիման վրա կատարված լինելու և ելակետային տվյալների հետագա փոփոխության դեպքում փորձաքննությամբ կատարված հետևությունների հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

35. Եթե փորձագետին առաջադրված հարցերը դուրս են իր հատուկ գիտելիքների և հմտությունների շրջանակներից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար, ապա փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում:

36. Կրկնակի փորձաքննության շրջանակում կազմվող փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի գործի հանգամանքների՝ այդ թվում նախորդիվ իրականացված փորձաքննության վերաբերյալ նկարագրություն, ինչպես նաև անդրադարձ նախորդիվ իրականացված փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցի վերաբերյալ:

37. Հանձնաժողովային փորձաքննություն կատարելիս միասնական հետևության հանգելու դեպքում, եզրակացությունը ստորագրում են փորձաքննությունը կատարած բոլոր փորձագետները: Տարաձայնության դեպքում, յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ դրանում ընդգրկելով բոլոր կամ միասնական դիրքորոշման չհանգած հարցերի վերաբերյալ պարզաբանումները:

38. Համալիր փորձաքննության կատարման ընթացքում պարզված հանգամանքների համակցության հիման վրա, փորձագետներից յուրաքանչյուրն իր հատուկ գիտելիքների և հմտությունների սահմաններում մասնակցում է ընդհանուր եզրակացության ձևավորմանը: Յուրաքանչյուր փորձագետ ստորագրում է եզրակացության այն հատվածում, որն իր մասնագիտական իրավասության սահմաններում է:

39. Փորձագետի եզրակացությանը փաթեթավորված և կնքված ձևով կցվում են դրան վերաբերող նյութերը, այդ թվում՝ իրեղեն ապացույցները, նմուշները և այլ օբյեկտներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետի հետևությունները պարզաբանող և հիմնավորող սխեմաներ, գծագրեր, լուսանկարներ, ձայնագրություններ, տեսագրություններ, տեսաձայնագրություններ և այլն:

40. Եզրակացությունը և հավելվածները կազմվում են երկու օրինակից, որոնցից առաջինն ուղարկվում է Նախաձեռնողին, իսկ երկրորդը մնում է փորձագիտական վարույթում, որին կից փաստաթղթում սահմանված ձևով լրացվում են փորձաքննության վերաբերյալ վիճակագրական տվյալները և փորձաքննության ավարտից հետո հանձնվում է Կենտրոնի գրասենյակին: Եթե փորձաքննությունը կատարվել է Կենտրոնի շենքից դուրս, ապա փորձագիտական վարույթը հանձնվում է Կենտրոնի գրասենյակին՝ Կենտրոնի տնօրենի կամ նրա տեղակալի մակագրության հիման վրա: Կենտրոնի գրասենյակի պետը փորձաքննության ավարտման մասին էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ դրա բացակայության դեպքում, հեռախոսազանգի միջոցով ծանուցում է նախաձեռնողին:

VI. ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԵԼՈՒՄՈՒՏԸ

41. Իրեղեն ապացույցների պահպանության և հաշվառման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնի համապատասխան ստորաբաժանման՝ գրասենյակի կողմից, այդ նպատակով Կենտրոնում իրեղեն ապացույցների ստացման համար նախատեսված սենյակում: Ստացված Իրեղեն ապացույցները (փաթեթները) նկարահանվում են և նկարները կցվում են Կենտրոնում պահպանվող փորձագիտական վարույթի նյութերին:

42. Կենտրոնի գրասենյակի պետը կազմակերպում է իրեղեն ապացույցների ստացումը փորձագետների կողմից և իրականացնում է իրեղեն ապացույցների հաշվառումը Կենտրոնի՝ փորձագիտական վարույթների հաշվառման նպատակով վարվող թիվ 11 ձևով հաստատված հաշվառման մատյանում գրառում կատարելու միջոցով: Հաշվառման մատյանի

յուրաքանչյուր թերթ համարակալվում է, իսկ մատյանը կարվում և կնքվում է Կենտրոնի կնիքով և ստորագրվում է Կենտրոնի տնօրենի կողմից:

43. Հաշվառման մատյանում յուրաքանչյուր առարկա և փաստաթուղթ գրանցվում է առանձին: Միանման մի քանի առարկաների դեպքում, նշում է կատարվում դրանց քանակի մասին: Հաշվառման մատյանում իրեղեն ապացույցները գրանցվում են համաձայն Կենտրոնին ներկայացված ցանկի յուրաքանչյուր առարկան գրանցելով հերթական համարի տակ:

44. Կենտրոնի գրասենյակի պետը, իրեղեն ապացույցները ընդունելիս, այդ մասին գրառում է կատարում հաշվառման մատյանում, որում դնում է իր ստորագրությունը:

45. Կենտրոնի գրասենյակի պետը, իրեղեն ապացույցները ստանալիս, ստուգում է փաթեթի ամբողջականությունն ու նրա վրա եղած կնիքի առկայությունը: Փաթեթի բացված լինելու կամ դրա վրայի կնիքի բացակայության դեպքում, գրասենյակի պետը փաթեթը վերադարձնում է այն ներկայացնող անձին:

46. Քննության կատարումից հետո, քննության ենթարկված իրեղեն ապացույցը փորձագետի եզրակացության հետ միասին հանձնվում է Կենտրոնի գրասենյակ, և գրասենյակի պետը հանձնման ամսաթիվը նշում է հաշվառման մատյանում:

47. Քննության ավարտից հետո իրեղեն ապացույցները պահվում են պահասենյակում և փորձագետի եզրակացության հետ միասին հանձնվում են Նախաձեռնողին:

VII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

48. Սույն կարգի պահանջները տարածվում են դրա ուժի մեջ մտնելու պահից Կենտրոնին հանձնարարված, ինչպես նաև Կենտրոնում ընթացքի մեջ գտնվող փորձաքննությունների նկատմամբ, բացառությամբ Կարգի 23-րդ կետի, որը տարածվում է միայն սույն կարգի ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնում ստացված փորձաքննությունների կատարման նկատմամբ:

Հավելված 2
«Հայաստանի Հանրապետության
ոստիկանության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671-Ա հրաման
Ձև 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(Քրեական դատավարության շրջանակում նշանակված փորձաքննությունների դեպքում)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի համաձայն՝ ինձ (մեզ) բացատրվել է (են) փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախատեսված են նույն օրենսգրքով:

Կեղծ եզրակացություն կամ կարծիք տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին ծանուցված եմ:

Փորձագետ՝

անուն, ազգանուն

(Քաղաքացիական դատավարության շրջանակում նշանակված փորձաքննությունների դեպքում)

Ինձ բացատրվել են 2018թ. ապրիլի 09-ին գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածով սահմանված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 7-րդ մասի կարգով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար մինչև 2022 թ. հուլիսի 01-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ, ինչպես նաև կեղծ եզրակացություն կամ կարծիք տալու համար 2022թ. հուլիսի 01-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին ծանուցված եմ:

Փորձագետ՝

անուն, ազգանուն

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N	[illegible]	[illegible]

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՅՐԸ

1.
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ՓՈՐՁԱԳԵՏԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ-ՍՏԱԺՈՐԻ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ՓՈՐՁԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏԱԺԸ

1.
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇՄԱՆ, ՎԱՐՈՒՅԹԻ, ԴԻՄՈՒՄԻ ԿԱՄ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Որոշման կամ դիմումի կամ այլ փաստաթղթի համար.
2. Որոշման կամ դիմումի կամ այլ փաստաթղթի տարեթիվ, ամիս, ամսաթիվ, ստորագրող անձի տվյալները:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

1. Նշել ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 1861-Լ որոշմամբ սահմանված տեսակը, ենթատեսակը.
2. Նշել ըստ կատարող անձանց՝ միանձնյա, հանձնաժողովային, համալիր
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁԱԾ ԱՆՁԻՆՔ

1.
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Այդ թվում նշում նախաձեռնողի կողմից չառաջադրված, սակայն հետազոտության ընթացքում ի հայտ եկած, վարույթի համար նշանակություն ունեցող հարցերի և հանգամանքների վերաբերյալ,
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1.
2.
3.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. փորձաքննության կատարման ընթացքում հետազոտված կամ օգտագործված՝ վարույթի նյութերը, այդ թվում՝ իրերեղեն ապացույցները, նմուշները եվ այլ օբյեկտները,
2. փորձաքննության կամ հետազոտության ընթացքում կիրառված մեթոդի անվանումը, մեթոդի նկարագրությունը, մեթոդի ընտրության հիմնավորումը,
3. փորձաքննության ընթացքում հետազոտված օբյեկտների ցանկը:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԲՈԼՈՐ ԿԱՄ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1.
2.
3.

Փորձաքննությունը կատարած փորձագետ՝ _____:

(անուն, ազգանուն՝ նախաթատերագրերով)

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Փրկաշիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 -Ն հրաման
Ձև 2

(տեղեկատվություն՝ բնակարանային ապահովման ստացման մասին պարտադիր ներկայացման ենթակա անձանց մասին)

Հարգելի պարոն/տիկին _____,

Կից Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Փրկաշիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ փրկաշնչությունների բաժնի
(անվանում)
փրկաշեստ _____-ի _____ կազմված թիվ _____
(անվանում) (ամսաթիվ) (թիվ)
փրկաշեստի եզրակացությունը կամ հետազոտությունը թիվ _____
(ամսաթիվ՝ թիվ տարվա)
գործի կամ վարույթի շրջանակներում:

Խնդրում փրկաշնչության հետ կապված ծախսերի վճարման վերաբերյալ:

Առդիր՝ _____ թերթ:

Հարգանքով՝
Տնօրեն _____
(անվանում)

Դատարան՝ _____
(անվանում՝ եթե դատարանում՝ դատավորի անուն)

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 հրաման
Ձև 3

_____
(գրասենյակի անվանումը)

_____
(գրասենյակի հասցեն)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից թիվ _____ շրջանակում նշանակված _____ փորձաքննության կատարման ընթացքը:
(քննության տեսակը՝ գրչի) (փորձագետի տեղեկությունները՝ անուն, ազգանուն, հայրանուն) (քննության տեսակը) (փորձագետի տեսակը՝ անուն)

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

Փորձաքննություն թիվ՝ _____ _____
(թվանշան) (քննության տեսակը)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ (անուն ազգանուն) փորձաքննությունների բաժնի փորձագետ _____ (անուն ազգանուն), _____ (փորձագետի հասկացությունը) թ-ից հանդիսանալով թիվ _____ (թվանշան) քաղաքացիական գործի շրջանակում կատարող փորձագետ, ծանոթանալով _____ (փորձագետի տեղեկությունները՝ անուն, ազգանուն, հայրանուն) կողմից _____ (քննության տեսակը՝ գրչի) _____ (փորձագետի տեսակը՝ անուն) փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, ուսումնասիրելով քաղաքացիական գործի շրջանակում տրամադրված նյութերը, տեղեկացնում եմ, որ առաջացել են փորձաքննության ընթացքին խոչընդոտող հանգամանքներ, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու անհնարինություն, ինչով պայմանավորված, ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասով, խնդրում եմ տրամադրել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը կամ տեղեկությունները.

1.
2.
3.

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 հրաման
Ձև 4

_____
(պատասխանողի անունը)

_____
(պատասխանողի հասցեն)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից թիվ _____ շրջանակում նշանակված _____ փորձաքննության կատարման ընթացքը:
(թիվ, ամսաթիվ, գրիֆ) (փորձագետի գրաֆիկական նշան)

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

Փորձաքննություն թիվ՝ _____ _____
(թիվ) (ամսաթիվ)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ փորձաքննությունների բաժնի փորձագետ _____, _____ թ-ից հանդիսանալով թիվ _____ քաղաքացիական գործի շրջանակում կատարող փորձագետ, ծանոթանալով _____ կողմից _____ _____ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, ուսումնասիրելով քաղաքացիական գործի շրջանակում տրամադրված նյութերը, տեղեկացնում եմ, որ առաջացել է լրացուցիչ նյութեր պահանջելու անհրաժեշտություն, ինչով պայմանավորված, ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ ենթակետով, խնդրում եմ տրամադրել փորձաքննության կատարման անհրաժեշտ հետևյալ լրացուցիչ նյութերը.

1.
2.
3.

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 հրաման
ՁԵՎ 5

_____
(փաստաթղթի դրվագն ստորագրելու անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից թիվ _____ շրջանակում նշանակված _____ փաստաթղթի կատարման ընթացքը:
(թիվ, ամսաթիվ) (փաստաթղթի դրվագն ստորագրելու անձի պաշտոնը, անունը, ազգանունը) (քրեական գործի անվանում)

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթի թիվ՝ _____ _____
(թիվ, ամսաթիվ) (ամսաթիվ տարեթիվ)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Քրեական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ (բաժնի անվանում) փաստաթղթերի բաժնի փաստաբան _____ (անուն, ազգանուն), հանդիսանալով թիվ _____ (թիվ, ամսաթիվ) քրեական վարույթի շրջանակում կատարող փաստաբան, _____ թ-ին ծանոթանալով _____ (փաստաթղթի դրվագն ստորագրելու անձի պաշտոնը, անունը, ազգանունը) կողմից քրեական վարույթի շրջանակում _____ (ամսաթիվ տարեթիվ) _____ (փաստաթղթի տեսակի անվանում) փաստաթղթի նշանակելու մասին որոշմանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով, միջնորդում եմ տրամադրել փաստաթղթի կատարման համար անհրաժեշտ հետևյալ տեղեկությունները, օբյեկտները, նմուշները կամ այլ նյութեր՝ եզրակացություն տալու համար.

1.
2.
3.

Փաստաբան՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 հրաման
Ձև 6

_____
(գործակալի անվանումը)

_____
(գործակալի հասցեն)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից թիվ _____ շրջանակում նշանակված _____ փորձաքննության կատարման ընթացքը:
(թիվ ամսաթիվ) (փորձագետի գրելու դիմումագրի անվանումը) (փորձագետի անունը, ազգանունը)

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

Փորձաքննություն թիվ՝ _____ _____
(թիվ) (թիվ ամսաթիվ)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Քրեական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ (անուն) փորձաքննությունների բաժնի փորձագետ _____ (անուն ազգանուն), հանդիսանալով թիվ _____ (թիվ) վարչական գործի շրջանակում կատարող փորձագետ, _____ թ-ին ծանոթանալով _____ (փորձագետի գրելու դիմումագրի անվանումը) կողմից _____ (թիվ ամսաթիվ) _____ (փորձագետի անունը, ազգանունը) փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտականության կատարման նպատակով, առաջացել է լրացուցիչ նյութեր պահանջելու անհրաժեշտություն, ուստի խնդրում եմ տրամադրել հետևյալ փաստաթղթերը կամ տեղեկությունները կամ նյութերը.

1.
2.
3.

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 8
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 հրաման
ՀԱՎ 7

_____
(տիրապետողի անվանումը կամ անունը, ազգանունը)

_____
(տիրապետողի անվանումը կամ անունը, հասցեն)

Դատեցեք՝ _____
(պրոկուրորի անունը, ազգանունը)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից թիվ _____ շրջանակում նշանակված _____ փորձաքննության կատարման ընթացքը:
(թվանշանով և գրությամբ) (փորձագետի պաշտոնը, անունը, ազգանունը) (թվանշանով) (փորձագետի անունը, ազգանունը)

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

ՏԱՆՈՒՑՈՒՄ

Փորձաքննություն թիվ՝ _____ _____
(թվանշանով) (թվանշանով և գրությամբ)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Քրեական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ (անվանումը) փորձաքննությունների բաժնի փորձագետ _____, (անունը, ազգանունը) հանդիսանալով _____ _____ կողմից _____ թիվ _____ (պաշտոնը, անունը, ազգանունը) (թվանշանով և գրությամբ) (թվանշանով) քրեական վարույթի շրջանակում կատարող փորձագետ, պատշաճ փորձաքննությունն իրականացնելու նպատակով ներկայացրել եմ միջնորդություն՝ խնդրելով տրամադրել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ _____, որի (անհրաժեշտ նյութերի անվանումը) վերաբերյալ դեռևս պատասխան չի ներկայացվել/ոչ ամբողջական է ներկայացվել:

Խնդրում եմ 30-օրյա ժամկետում ապահովել անհրաժեշտ նյութերի տրամադրումը՝ պատշաճ փորձաքննություն իրականացնելու համար, հակառակ դեպքում պարտավորված եմ ամբողջությամբ/մասնակի չկատարել փորձաքննությունը՝ անհրաժեշտ նյութերի (ելակետային տվյալների) ամբողջական/մասնակի բացակայության հիմքով պայմանավորված:

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 9
Հայաստանի Հանրապետության
Փորձաքննական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ.հունվարի 07-ի N 671 -Ն հրաման
ՁԵՎ 8

_____
(տնտեսավարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը)

_____
(տնտեսավարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը)

Խնդրում ենք ապահովել _____ _____ կողմից
(թվանշանով և գրությամբ) (տնտեսավարողի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը)
թիվ _____ շրջանակում նշանակված _____ փորձաքննության կատարման
(թվանշանով և գրությամբ) (տնտեսավարողի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը)
ընթացքը:

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Փորձաքննություն թիվ՝ _____ _____
(թվանշանով) (տնտեսավարողի անունը)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____
(թվանշանով)
փորձաքննությունների բաժնի փորձագետ _____,
(անուն ազգանուն)
հանդիսանալով _____ _____ կողմից _____ թիվ _____
(տնտեսավարողի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը) (թվանշանով և գրությամբ) (թվանշանով)
քաղաքացիական/վարչական վարույթի շրջանակում կատարող փորձագետ, պատշաճ փորձաքննությունն իրականացնելու նպատակով ներկայացրել եմ լրացուցիչ նյութեր տրամադրելու վերաբերյալ դիմում՝ խնդրելով տրամադրել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ _____, որի վերաբերյալ դեռևս
(ցանկը նշել տալ)
պատասխան չի ներկայացվել/ոչ ամբողջական է ներկայացվել :

Խնդրում եմ 30-օրյա ժամկետում ապահովել անհրաժեշտ նյութերի տրամադրումը՝ պատշաճ փորձաքննություն իրականացնելու համար, հակառակ դեպքում պարտավորված եմ ամբողջությամբ/մասնակի չկատարել փորձաքննությունը՝ անհրաժեշտ նյութերի (ելակետային տվյալների) ամբողջական/մասնակի բացակայության հիմքով պայմանավորված:

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 10
Հայաստանի Հանրապետության
Քրեական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ. դեկտեմբերի 07-ի N 671-Ա հրաման
ՁԵՎ 9

(տեղեկատվության գաղտնի կամ գաղտնի չհանդիսացող՝ անհրաժեշտը ընդգծել)

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը _____ (անհրաժեշտը նշել) թիվ _____ քրեական վարույթի շրջանակում նշանակված _____ (տեղեկատվության գաղտնի անվանում) փորձաքննության շրջանակում տրամադրված նմուշի հետազոտության համար, քանի որ առկա է նմուշի հետազոտության ժամանակ դրա վերանալու կամ հետագա հետազոտության համար ոչ պիտանի դառնալու վտանգ:

Տնօրեն՝ **Ա. Ազգանուն**

Փորձաքննություն թիվ՝ _____ (անհրաժեշտը նշել) _____ (տեղեկատվության գաղտնի անվանում)

Ես՝ «Հայաստանի Հանրապետության Քրեական կենտրոն» ՊՈԱԿ-ի _____ (անվանում) փորձաքննությունների բաժնի փորձագետ _____ (անուն, ազգանուն), հանդիսանալով թիվ _____ (անհրաժեշտը նշել) քրեական վարույթի շրջանակում կատարող փորձագետ, _____ (տեղեկատվության գաղտնի չհանդիսացող՝ անհրաժեշտը նշել) կողմից _____ (տեղեկատվության գաղտնի անվանում) քրեական վարույթի շրջանակում _____ (տեղեկատվության գաղտնի անվանում) փորձաքննության իրականացման համար՝ _____-թ-ին ծանոթանալով փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը և գործի շրջանակում տրամադրված նմուշին, առաջնորդվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ տեղեկացնում եմ, որ առկա է, _____ (տեղեկատվության գաղտնի անվանում) մեթոդով փորձաքննության իրականացման արդյունքում նմուշի վերացման կամ հետագա հետազոտության համար ոչ պիտանի դառնալու վտանգ, ուստի հիմք ընդունելով՝ վերոգրյալը, խնդրում եմ Ձեր համաձայնությունը նմուշի հետազոտության իրականացման համար:

Փորձագետ՝ **Ա. Ազգանուն**

Հավելված 11
Հայաստանի Հանրապետության
Փրկաշխատական կենտրոն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ. հունվարի դեկտեմբերի 07-ի N 671-Ա հրաման
Ձև 10

Ամսական հաշվետվություն ընթացիկ փրկաքննությունների վերաբերյալ								
Հ/Հ	Փրկաքննության ներքին համարը	Փրկաքննության նպատակների ամսաթիվը	Հետազոտող տրիբունալի անունը	Փրկաքննության տեսակը (Մի-անձնական, հանձնաժողովային, համալիր. առաջնային. կրկնակի. հրատապ)	Մնացորդային կակտալին տվյալներ պահանջելու մասին միջնորդության ամսաթիվը	Մոնիտորինգի պատասխանի տրամադրման ամսաթիվը	Ստացած են արդյոք կակտալին տվյալները (այո/ոչ)	Փրկաքննության ավարտման սահմանված ամսաթիվը
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								

Հավելված 12
Հայաստանի Հանրապետության
Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թ. հունվարի 17-ի N 671-Ա հրաման
ձև N 1

ՄՈՒՏՔԵՐԻ ԵԼՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀՅԵՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Փորձաքննության մասնագիտության հերթական համարը	Նյութերի ստացման ամիս, ամսաթիվ	Նյութերը ստացել է՝ ֆամիլիան, անունը	Գործի համարը (քրեական գործ, քաղաքացիական գործ, գրություն, դիմում, նյութ, տեղեկություն)	Հետազոտության տեսակները	Լաբորատորիայի ստորագրությունը
1	2	3	4	5	6

Փորձաքննության կամ ստորաբաժանման ղեկավարի ազգանունը՝ ում հանձնարարվել է փորձաքննություն կատարելու, նրա ստորագրությունը ու նյութերը ստանալու ամսաթիվ՝ մասնագետի	Հարցադրումներ	Փորձաքննության եզրակացության և նյութերի հանձնման ամսաթիվը		Լաբորատորիայի ստորագրությունը	Փորձաքննության եզրակացությունը և նյութերը ուղարկելու ձևը, հասցեատերի ազգանունը, ստորագրությունը, ամիս, ամսաթիվ՝
7	8	9		10	11